ՀՀ ԿԳՄՍՆ

<<Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց >>ՊՈԱԿ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. **Թեմա՝** **Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտում**

**Դպրոց՝** Գնդեվազի միջնակարգ դպրոց

**Ուսուցիչ՝** *Լեռնիկ Մկրտչյան*

**Ղեկավար՝** Կիմա Օհանեսյան

**Վայք 2023**

# Բովանդակություն

*Ներածություն*

2. Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտում

*2.1. Ի՞նչ է ներառական դպրոցը.*

*2.2. Ի՞նչ է ասում օրենքը երեխայի ներառական կրթության իրավունքի մասին.*

3. Ընտանիքի, դպրոցի, համայնքի համագործակցությունը և փոխներգործությունը

*3.1. Ուսուցիչների նախապատրաստումը*

*3.2. Ուսուցիչների պարտականությունները*

*3.3. Հատուկ կարիքներով երեխաների խմբերը*

3. Ներառական կրթություն իրականացնող ուսուցիչների աջակցությունը կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների ընտանիքներին

*Եզրակացություն*

*Հավելված*

*Օգտագործված գրականության ցանկ*

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխան մուտք է գործում դպրոց իր կյանքի դժվար և բեկումնային շրջաններից մեկի ընթացքում: Այս տարիքի երեխային նկարագրելիս՝ որպես առաջնային բնութագիր կարելի է ընդգծե մանկական անմիջական կորուստ: Որպես ճգնաժամի առանցքային բնութագիր կարելի է նշել երեխայի անձի ներքին և արտաքին կողմերի տարանջատման սկիզբը: Երեխայի նախկին անմիջականությունն ու միամտությունը ցույց էին տալիս, որ երեխայի արտաքին ու ներքին աշխարհները համընկնում էին: Անմիջականության կորուստը նշանակում է, որ վարքաձևում հայտնվում են ինտելեկտուալ բաղադրամասեր, որոնք ճեղքում են ապրումներն ու անմիջական վարքաձևերը: Նա իրեն "մեծահասակ" զգալու, հասուն լինելու, "մեծական" վարքաձևեր դրսևորելու, ինքնուրույն որոշումներ ընդունելու, կարծիք հայտնելու և այլնի սուր ձգտում ու պահանջմունք է ունենում: Դպրոց հաճախելը երեխայի համար սոցիալական միջավայրի և դիրքի փոփոխություն է, սեփական սոցիալական դիրքի ձեռքբերում, ինչն էլ արդեն մեծանալու նշան է: Ինչպես նշում է հայտնի հոգեբան Լ.Բոժովիչը, 7 տարեկանի ճգնաժամը երեխայի սոցիալական Ես-ի ծնվելու շրջանն է:

Ըստ վիճակագրական տվյալների աշխարհում կես միլիոն մարդ ունի մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամություն: Նրանցից շատերը մեկուսացված են հասարակությունից և հնարավորություն չունեն զարգանալու: Ամբողջ աշխարհում մոտ 140 միլիոն երեխա զրկված է կրթություն ստանալու հնարավորությունից:

Կրթությունը մարդու հիմնական իրավունքն է: Այն հասարակության կյանքում հանդիսանում է զարգացման և կայունության հիմք և 21-րդ դարի տնտեսության մեջ արդյունավետ մասնակցության անհրաժեշտ պայման (Համաշխարհային Կրթական Ֆորում, 2000թ. Պար. 6):

Ներառական կրթությունը մի գործընթաց է որն հենվում է բոլոր երեխաների կրթություն ստանալու իրավունքի վրա,այդ թվում նաև կրթության արանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների իրավունքի: Ներառական կրթությունը

- ընդունում է որ բոլոր երեխաները կարող են սովորել,
- ընդունում և հարգում է երեխաների տարբերությունները՝ տարիքը, սեռը, ծագումը լեզուն զարգացման խնդիրները և այլն,
- ստիպում է կրթական կառույցներին կրթական գործընթացը կազմակերպել և իրականացնել բոլոր երեխաների կարիքներին համապատասխան,
- ներառական հասարակության գաղափաի մաս է,
- դինամիկ և զարգացող գործընթաց է;

Ներառական կրթությունը ունի մի շարք առավելություններ՝

- այն ենթադրում է ոչ թե երեխայի հարմարեցում համակարգին, այլ համակարգի հարմարեցում երեխային,

- սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաները կարողանում են կրթություն ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից,
- օգնում է հաղթահարել խտրականությունը,
- նպաստում է աղքատության պատճառով առաջացող երևույթների վերացմանը,
- նպաստում է ավելի լայն ներառման,
- կարող է բարձրացնել կրթության որակը բոլորի համար:

## 1. Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական տարիքների բացահայտում

Տարրական դպրոցում դասի կազմակերպման ձևի ընտրությունը պետք է լինի բազմազան: Առավել հաճախ օգտագործվում է Համատեղ աշխատանքը: 26-30 հոգուց բաղկացած դասասենյակում նման կազմակերպության դեպքում հնարավորություն չկա խոսելու յուրաքանչյուր աշակերտի հետ, իսկ ուսուցիչը չի կարող վերահսկել ուսումնասիրվող նյութի յուրացման մակարդակը, ժամանակին տեսնել յուրաքանչյուրի խնդիրները, հարմարեցնել դրանք: Այն հատկապես կարևոր է դասի նպատակների կատարման, ռեֆլեքսիայի անցկացման ժամանակ: Համատեղ աշխատանքը թույլ է տալիս համատեղ լուծել խնդիրները, ցուցադրել բարդ հարցերի պատասխանները գտնելու ալգորիթմները:

Ներառական կրթությունը ապահովում է ոչ միայն տվյալ երեխայի ներկայությունը դպրոցում, այլև բոլորի մասնակցությունը ուսումնական ծրագրերին համապատասխան ուսումնառությանը, դպրոցական միջոցառումներին և խաղերին, նպաստում է նաև այլ երեխաների և ուսուցիչների հետ փոխհարաբերվելուն: Այլ կերպ ասած ներառական կրթությունը չեզոքացնում է այն վտանգները, որոնք առաջանում են երբ երեխան դուրս է մնում վերոնշյալ գործընթացներից, ապահովում է պայմաններ, որ տեղի չունենա հասարակությունից երեխայի մեկուսնալը:

### *1.1. Ի՞նչ է ներառական դպրոցը.*

- ✓ Բոլոր երեխաները ընդգրկված են հանրակրթական դասարանում ամեն օր ամբողջ օրվա ընթացքում,
- ✓ Բոլոր սովորողները, անկախ իրենց անհատական կարողություններից, աշխատում են աջակցության պատրաստ կառույցներում և խմբերում,
- ✓ Բոլոր երեխաները համարվում են իրազեկ և կարողունակ,
- ✓ Հիմնական ուսումնական ծրագրով սովորելու համար ուսումնական պլանի հարմարեցման և անհատական ուսուցման միջոցով սովորողներին անհատական աջակցություն է ցուցբերվում,
- ✓ Դպրոցական համայնքի լիիրավ անդամներ համարվում են բոլոր սովորողները, նրանք կարող են մասնակցել դպրոցական կյանքի բոլոր փուլերին և զարգացնել սոցիալական հարաբերոյոններ իրենց հասակակիցների հետ:

**Կանոններ, որոնք պետք է հետևեն ուսուցչին իր նեյրոդինամիկ հատկություններով թույլ աշակերտների նկատմամբ.**

1. Թույլերին չդնել անսպասելի հարցի և դրան արագ պատասխանի իրավիճակում: Աշակերտին բավականաչափ ժամանակ տալ մտածելու և պատրաստվելու համար:
2. Ցանկալի է, որ պատասխանը լինի ոչ թե բանավոր, այլ գրավոր:
3. Չի կարելի սահմանափակ ժամանակահատվածում յուրացման համար տալ մեծ, բազմազան, բարդ նյութ, անհրաժեշտ է այն բաժանել առանձին տեղեկատվական կտորների և աստիճանաբար տալ:
4. Ավելի լավ կլինի, որ նման աշակերտներին չստիպել պատասխանել դասին նոր սովորած նյութին, պետք է հետաձգել հարցումը հաջորդ դասին՝ աշակերտին հնարավորություն տալով սովորել տանը:
5. Հարցումների և պարգևատրումների ճիշտ մարտավարության միջոցով (ոչ միայն գնահատականով, այլ նաև «գերազանց», «լավ», «խելացի» և այլն) դիտողություններով անհրաժեշտ է ձևավորել աշակերտի մոտ վստահություն իր կարողությունների նկատմամբ և. գիտելիքներ, սովորելու հնարավորության մեջ, որը կօգնի նրան քննությունների, թեստերի և այլնի իրավիճակներում:
6. Պետք է ուշադիր գնահատել աշակերտի անհաջողությունները, քանի որ նա ինքը ցավալիորեն կապված է դրանց հետ:

Անհրաժեշտ է նվազագույն չափով շեղել նրան, աշխատել չփոխել նրա ուշադրությունը, ստեղծել հանգիստ, ոչ նյարդային միջավայր

### *1.2.Ի՞նչ է ասում օրենքը երեխայի ներառական կրթության իրավունքի մասին.*

Ներառումը իրավունք է:

- ✓ Հայաստանում ներառական կրթությունը ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ և «Կրթության մասին» օրենքում:
- ✓ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 24-րդ հոդվածը ճանաչում է ներառական կրթության իրավունքը որպես հաշման-դամություն ունեցող անձանց մարդու իրավունք: Իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի կողմից 2016թ. Օգոստոսի 26-ին ներկայացված թիվ 4 Ընդհանուր մեկնաբա-նությունում (http://bit.ly/3k8rkap) կառավարություններին՝ այդ թվում ՀՀ կառա-վարությանը ներկայացվել ե պարզաբանում, թե ի՞նչ է նշանակում «ներառական կրթություն», և ինչ պետք է անեն կառավարությունները 24-րդ հոդվածի համաձայն: [1]

Հայաստանի կառավարությունը և.ս դրական քայլեր է ձեռնարկել երեխաների կրթության իրավունքն իրացնելու նպատակով, այս փաստն է վկայում ՀՀ Ազգային ժողովի 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր

ներառական կրթության [3]:

Համաձայն օրենքի՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հանրապետությունում կներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգ: Ըստ օրենքի՝ ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է: Համաձայն վերոհիշյալ օրենքի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունի «ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ ունեցող այն անձը, սովորողը, որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացվելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ»:

## *Ընտանիքի, դպրոցի, համայնքի համագործակցությունը եվ փոխներգործությունը*

Անկախ սահմանափակ հնարավորություններից կամ կրթական դժվարություններից բոլոր երեխաները դպրոցն ավարտելուց հետո որոշակի դեր ունեն հասարակության մեջ:

Երբ երեխան ներառվում է նախ նախադպրոցական հաստատություն , ապա միջնակարգ դպրոց և քոլեջ, աստիճանաբար ինտեգրվում է հասարակությանը: Նրանք սովորում են հանրակրթական դպրոցներում՝ ստանալով համապատասխան օժանդակություն, որը մատուցվում է տարբեր ուղիներով.

1. Մշակվում է մեթոդաբանություն տարբեր ընդունակություններով երեխաների ուսուցմանն աջակցելու համար, քանի որ սրանով լավանում է ոչ միայն հատուկ պահանջմունքներով երեխաների ուսման որակը, այլևբոլոր երեխաների ցուցանիշները:
2. Բոլոր երեխաները մասնակցում են այն բոլոր միջոցառումներին, որտեղ դասարանը և դպրոցական միջավայրը (մարզական միջոցառումներ, ներկայացումներ, մրցույթներ, էքսկուրսիաներ և այլն) ներառական է:
3. Անհատական ուսուցումը աջակցության է արժանանում ուսուցիչների, ծնողների, և այլ մասնագետների համատեղ աշխատանքի շնորհիվ:
4. Ներառական կրթությունն օգնում է կանխել երեխաների նկատմամբ խտրակա-

նությունը և սատարում է հատուկ պահանջմունքներով երեխաներին, ովքեր ունեն իրավունք իրենց համայնքների և ողջ հասարակության իրավահավասար անդամներ լինելու:

Մանկավարժներին շատ է օգնում ճկուն դասացուցակը, ծնողների հետ աշխատանքը, հասարակական կազմակերպությունների հետ փոխգործակցությունը, արտադասարանական համատեղ աշխատանքները: Սրանք բոլորն օգնում են մանկավարժներին ավելի լավ հարմարվել երեխաների հետաքրքրություններին ու կարիքներին, նպաստել, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները ստանան անհրաժեշտ ծառայություններ և աջակցություն:

Ներառական կրթության արդյունավետ կազմակերպման համար կարևորեն են հետևյալ գործոնները՝

- ✓ **Ուսուցիչների համագործակցություն-** Ոչ մի մանկավարժ չի կարող արդյունավետ ուսուցանել աշակերտներին, եթե չստանա գործընկերների օգնությունն ու խորհուրդները:
- ✓ **Ծրագրերի հարմարեցում** աշակերտների անհատական առանձնահատկություններով պայմանավորված կարողություններին ուսուցիչները ցուցաբերում են տարբեր մոտեցումներ տարբեր ընդունակություններով, պահանջմունքներով, նախասիրություններով երեխաներին ուսուցանելու համար:
- ✓ **Հավասար հնարավորությունների ընձեռում-** Ուսուցիչը պետք է համոզվի, որ բոլոր աշակերտներն ունեն տեղեկատվությունից, գիտելիքների և հմտություններից օգտվելու հավասար հնարավորություն:[3]

## *1.1. Ուսուցիչների նախապատրաստումը*

Ուսուցիչների ճկունություն ու ստեղծագործական մոտեցումը ավելի կբարձրացնի աշխատանքի որակը, եթե ընձեռվի միմյանց աշխատանքին հետևելու հնարավորություն: Բացի այդ կից ոլորտների՝ օր՝. առողջապահության կամ սոցիալական ծառայությունների հետ համագործակցությունը ներառական կրթության կառավարման մասն է, քանի որ երեխաները և նրանց ընտանիքները կարող են ծառայություններ ստանալ տարբեր աղբյուրներից:

Ուսուցիչները պետք է հիմնական գիտելիքներ ստանան հաշմանդամության ասպարեզից, որպեսզի նրանց վերաբերմունքն ու մեթոդները չխանգարեն կրթության առանձնացված պայմանների կարիք ունեցող երեխաներին՝ ուսումնական պլանի նկատմամբ հավասար մատչելիություն ապահովելուն: Նման ուսուցումը պետք է լինի մշտական՝ կարճ դասընթացների կամ մոդուլների ձևով և անցկացվի տեղական կրթական միջավայրում, ցանկալի է հենց իրենց դպրոցում:

Կոնկրետ հիմնախնդիրներ ընդգրկող գործնական ուսուցումը ավելի արդյունավետ է քան

տեսական ուսուցումը:

Եթե ուսուցիչները կանոնավոր կերպով հանդիպեն և քննարկեն իրենց խնդիրները, ապա կզարգացնեն իրենց ընդունակությունների նկատմամբ վստահություն, ինչը կբերի անձնակազմի որակավորման բարձրացմանը:

## *1.2. Ուսուցիչների պարտականությունները*

Ուսուցիչները պետք է հասկանան և ընդունեն այն փաստը, որ եթե բոլոր երեխաներն ունեն կրթության իրավունք ուրեմն իրենց պարտականությունն է ուսուցանել բոլոր երեխաներին:

Ուսուցիչներին այդ պատասխանատվությունը ստանձնելու և մոտիվացիայի առկայության դեպքում անհրաժեշտ է լինելու գործնական աջակցություն: Խրախուսումը կարող է օգտակար լինել ուսուցիչների շահագրգռության աջակցելու համար:

*Դասավանդման մեթոդիկան* **-** Ուսուցման մեխանիկական մեթոդներին սովոր ուսուցիչների համար դժվար կլինի զուգակցել առավել ակտիվ մեթոդներ,
սրան կարող է օգնել դասասենյակի վերադասավորությունը, որպեսզի երեխաները կարողանան աշխատել խմբերով, երեխաների մեջ բարեկամական հարաբերությունների

լավացումը, որպեսզի լավ սովորողներն օգնեն ուսման մեջ դժվարություններ ունեցողներին, խաղերի կիրառումը և այլն:

Ուսուցիչները պետք է հնարավորություն ունենան փորձելու նոր մեթոդներ և հաղորդակից դառնալ մյուս ուսուցիչների աշխատանքին:

*Երեխաների մասնակցությունը* - ՝՝Երեխան երեխային՝՝ սկզբունքով աշխատանքի մեթոդներ Երեխաներն իրենցից ներկայացնում են կրթության մեջ արժեքավոր և հաճախ չպահանջված ռեսուրս: Նրանք, որպես կանոն, ավելի հանդուրժող են հաշմանդամության նկատմամբ, քան իրենց ուսուցիչներն ու ծնողները: ՝՝Երեխան երեխային՝՝ սկզբունքով մոտեցումը շատ արդյունավետ միջոց է երեխաների մասնակցությունը համախմբելու համար: Երեխաները շատ ակտիվ են լինում իրենց համայնքում հաշմանդամության նկատմամբ բացասական վերաբերմունքը հաղթահարելու համար՝ հայտնաբերելով դպրոցից դուրս մնացած երեխաներին, օգնելով հատուկ կարիքներով երեխաներին հասնելու դպրոց, դասերի ընթացքում գրառումներ անելով խուլ երեխաների համար, ուսուցանելով հատուկ կարիքներով երեխաներին տանը: Զամբիայում և Լեսոտոյում երեխաները հետազոտություն էին անցկացրել հատուկ կարիքներով երեխաներին հայտնաբերելու և նրանց ծնողներին՝ երեխաների դպրոց հաճախելու անհրաժեշտության հիմնավորման հարցում համոզելու նպատակով:

## *1.3. Հատուկ կարիքներով երեխաների խմբերը*

Որոշ իրավիճակներում շատ օգտակար է, որպեսզի հատուկ կարիքներով երեխաները կարողանան միավորվել խմբերում: Դա նրանց հնարավորություն է տալիս դրական ինքնագնահատական զարգացնել, ծանոթանալ հատուկ կարիքներով մարդկանց դերային մոդելներին, կիսել դժվարությունները հաղթահարելու իրենց փորձը: Խուլ երեխաներն այսպես պետք է կատարելագործեն ժեստերի լեզվով շփման հմտությունները: Այդպիսի խմբերի կազմակերպման մեջ կարևոր է հատուկ կարիքներով մեծահասակների և նրանց ընկերակցությունների դերը: Նեպալում հատուկ կարիքներով երեխաների խումբը ծավալեց համապետական քարոզարշավ համոզելու ծնողներին հատուկ կարիքներով իրենց երեխաներին դպրոց հաճախելու անհրաժեշտության մեջ:

Խիստ կարևոր է հատուկ կարիքներով երեխաների, երիտասարդության և մեծահասակ-ների ներգրավումը քաղաքականության և գործնական հանձնարարականների մշակման պրոցեսում: Անհրաժեշտ է գործի դնել հատուկ կարիքներով երեխաների և երիտասարդ մարդկանց ոչ մեծ խմբեր և օգնել նրանց արտահայտելու իրենց գերակայություններն ու պահանջմունքները. սա դեպի երեխան կողմնորոշված ու երեխաների առօրյա կյանքում առավել օգտակար կրթության ստեղծման ճանապարհին առաջին քայլն է: Նրանց մասնակցությունը հաճախ կարող է ներառական միջոցառումների մշակման արագացուցիչ ծառայել: Հաշմանդամության հարցերում նրանց գիտելիքներնու իրազեկությունը պետք է հարգել բոլոր մակարդակներում:

***Ուսուցիչների հարաբերությունները և վարքագիծը -*** Ուսուցիչները պետք է սովորեն լսել, լինեն հետևողական և համբերատար, հարգանքով վերաբերվեն յուրաքանչյուր երեխայի ուսուցման անհատական ոճին:

Նրանք նաև պետք է.

• ընդունեն, որ երեխաները տարբեր կերպ են սովորում, տարբեր արագությամբ և, այդ տարբերությունները հաշվի առնելով պլանավորեն պարապմունքները

• պլանավորեն գործողություններն ըստ իրադրության, այլ ոչ թե սահմանված ուսումնական պլանի համաձայն

• համագործակցեն ծնողների և համայնքի անդամների հետ, որպեսզի բոլոր երեխաները հաճախեն դպրոց

• ճկուն և ստեղծագործաբար արձագանքեն դասարանում բոլոր երեխաների և առանձին վերցրած յուրաքանչյուրի պահանջներին

• հաշվի առնեն, որ յուրաքանչյուր դասարանում երեխաների մի մասը ուսուցման որոշակի դժվարություններ ունի:

***Դասավանդման մեթոդիկան -*** Ուսուցիչը կարող է բարձրացնել դասարանի ներառման աստիճանը օգտագործելով դեպի երեխան կողմնորոշված ակտիվ մեթոդներ: Այդ մեթոդները կարող են.

- օգնել բոլոր երեխաներին խաղալ և սովորել միասին և կիսել պատասխանատվությունը
- պակասեցնել ուսուցման ժամանակ դժվարությունների ներգործությունը
- թույլ չտալ, որ այդ դժվարությունները զարգանան
- հայտնաբերել այն երեխաներին, որոնց հաճախ կոչում են ՝՝չհասցնողներ՝՝, թեպետ ըստ էության, դրանք հատուկ կարիքներով երեխաներ են

ուսումնական պլանում ակտիվացնել առօրյա կյանքում օգտագործվող հմտություններ

- ուսուցումը հետաքրքրաշարժ դարձնել
- անցած նյութը կապել դպրոցական և տան իրավիճակների հետ
- լավացնել դասարանում փոխհարաբերությունները
- օգնել ուսուցչին կատարելագործելու իր հմտությունները:

***Շփումը դասասենյակում -*** Ճիշտ շփումը և հասկանալի հաղորդակցումը շատ կարևոր են ինչպես ուսուցման և դասավանդման, այնպես էլ երեխաների միմյանց հետ հարաբերվելու
ընթացքում: Ուսուցիչները պետք է ջանան.

- խոսել պարզ, հասկանալի լեզվով, հետևողական խոսքով
- իմանալ ոչ վերբալ շփման հնարքները, ժեստերի լեզուն, կռահել դեմքի արտահայտությունները և այլն
- օգտագործել շփման ողջույնի և խրախուսական, այլ ոչ թե վերահսկողական հնարքներ
- ճկուն լինել շփման եղանակներն օգտագործելիս, օգնել նրանց, ով չի կարող օգտվել խոսակցական լեզվից, լսել նրանց ում մայրենի լեզուն տարբերվում է ուսուցման լեզվից
- շփման ժամանակ կանոնավոր դադարներ տալ կենտրոնանալու և ուշադրության ոչ մեծ լարվածություն ստեղծելու համար հետևել, որ բոլոր երեխաները կարողանան նորմալ տեսնել և լսել:

***Լսել և ականջ դնելը -*** Այն երեխաների համար, ովքերունեն լսողական խնդիրներ, կամ տան շփման լեզուն տարբերվում է ուսուցման լեզվից, ներառումը բարձրացնելու նպատակով պետք է.

- նստեցնել շրջանաձև, որպեսզի նրանք կարողանան տեսնել միմյանց դեմքերը: Դա կօգնի նրանց լսել և հասկանալ
- երեխաները պետք է լավ տեսնենուսուցչի դեմքը, ոչինչ չպետք է թաքցնի այն նրանցից

(օրինակ՝ ձեռքը, չխնամված մորուքը)

• խոսողի դեմքը երբեք չպետք է ստվերում լինի, պետք է կանգնել դեմքով դեպի լույսի աղբյուրը (օրինակ՝ դեպի պատուհանը), որպեսզի շրթունքներով

կարդալը որքան հնարավոր է հեշտ լինի

• երեխաների ուշադրությունը գրավել նախքան խոսել սկսելը

• օգտագործել դիտանյութեր՝ նկարներ, առարկաներ, հանգուցային բառեր՝ որպես դասի նախաբան

• նվազագույնի հասցնել կողմնակի աղմուկները

• լսողական ապարատներ օգտագործելիս ստուգել՝ արդյո՞ք դրանք ուժեղացնում են բոլոր ձայները՝ ներառյալ կողմնակիները (դժվար է տարբերել ձայները,

երբ մի քանի մարդ միաժամանակ խոսում են)

• լսողական խնդիրներով երեխաներին նստեցնել իրենց ընկերների հետ, որոնք նրանց փոխարեն գրառումներ կանեն, իսկ նրանք կկարողանան կենտրոնանալ շրթունքներով կարդալու վրա:

Երեխաները ճանաչում են իրենց շրջապատը լսելով այն, ինչ մարդիկ ասում են: Խուլ երեխաներին սովորեցնելու համար նրանց հետ պետք է ուղղակիորեն խոսել:

Նրանցից շատերը երբեք չեն սովորում խոսել: Ժեստերի լեզուն խուլ մարդկանց բնական լեզուն է: Այն սովորելու համար նրանք պետք է շփվեն մյուս խուլ մարդկանց հետ: Կրթության ոլորտի, դպրոցի ղեկավարները և ուսուցիչները կարող են տարբեր եղանակներով նպաստել ժեստերի լեզվի զարգացմանը:

***Խորհուրդներ***

- հրահանգների և աջակցության համար դիմեք խուլ մարդկանց պետական ընկերակցություն
- գտեք համայնքում չլսող մարդկանց, ովքեր գիտեն ժեստերի լեզուն
- թող չլսող մեծահասակները մասնակցեն չլսող երեխաների ուսուցմանը
- օգնեք ընտանիքներին յուրացնել ժեստերի լեզուն
- ուսուցիչները պետք է նախապատրաստում անցնեն ժեստերի լեզվի հիմունքներով և խլության հարցերով
- թող դպրոցում բոլոր սովորողները ուսումնասիրեն և հմտանան ժեստերի լեզվի մեջ:

Լսողական խնդիրներով երեխաների համար գործնական խորհուրդներից շատերը պետք կգան նաև տեսողության դժվարություններ ունեցողներին և ընդհանրապես

բոլոր երեխաներին: Ի լրումն ամենի.

• թող աշակերտները նստեն այնտեղ, որտեղից նրանք ամենալավն են տեսնում (լսում)

• նախքան խոսել սկսելը ներկայացեք տեսողության խնդիրներով երեխաներին, օրինակ՝ ասեք.՝՝Ես Մարիան եմ՝՝, կամ ՝՝Իմ անունն է...՝՝

• գրատախտակին գրեք հստակ, խոշոր ձեռագրով

• հանձնարարությունները բարձրաձայն կարդացեք. Մի՛ ապավինեք, թե բոլորը կարող են կարդալ դրանք գրատախտակից

• ասեք, թե ինչ է պատկերված դիտանյութերում (օրինակ՝ ՛՛ձախ կողմում նկարված է...՛՛ կամ ՛՛ներքևում գտնվում է՛՛...)

• նվազագույնի հասցրեք կամ վերացրեք կողմնակի աղմուկները, որպեսզի երեխաները կարողանան ամբողջությամբ կենտրոնանալ ուսուցչի խոսքի վրա և չշեղվեն կողմնակի ձայներից

• տվեք երեխաներին շոշափելու դիտանյութերը, եթե նրանք չենտեսնում: Օրինակ՝ քարտեզների վրայի գծերը կարող են առանձնացվել կարթաթելի օգնությամբ:

*Վատ տեսողությամբ (սուր բարդություններով) երեխաներին կօգնեն.*

• խոշոր տառատեսակը,

• խոշորացույցը,

• լուսավորության ճիշտ օգտագործումը,

• ընթերցանության համար ստենդները կամ գրակալները,

• կահույքի, դասագրքերի և այլնի գունավոր կոդավորումը: [3]

## 3. Ներառական կրթություն իրականացնող ուսուցիչների աջակցությունը կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների ընտանիքներին

ՀՀ հանրակրթության մասին օրենքում ներառականությունը սահմանված է որպես հիմնարար մոտեցում, որը հնարավորություն է տալիս կրթության առանձնահատուկ կարիք ունեցող սովորողներին ստանալ որակյալ և մատչելի կրթություն, որը իրականացնում են հանրապետության բոլոր դպրոցները: Անցումը համընդհանուր ներառական կրթության ՀՀ-ում իրականացվելու է մինչև 2025 թ.: Դպրոցում սովորում են հաշմանդամություն ունեցող երեխաներ և նրանց ընտանիքները կարող են հայտնվել կյանքի դժվարին իրավիճակներում: Այդ երեխաների խնամակալների առջև կարող են ծառացած լինել որոշակի խնդիրներ, որոնցից մի քանիսն ընդհանուր են, որոշները անհատական: Դպրոցում, որտեղ սովորում են հաշմանդամություն ունեցող երեխաներ խնդիրները կարող են լինել տարաբնույթ, օրինակ՝

1. Ինչպե՞ս լինել իրենց երեխայի պաշտպանը, որտեղից ստանալ անհրաժեշտ տեղեկություն, որպեսզի կարելի լինի պաշտպանել երեխային:
2. Պատկերացում ունենալ ներառական դպրոցում կրթության կազմակերպման

առանձնակատկությունների մասին, հասկանալ, թե ինչ ակնկալիքներ կարելի է ունենալ ներառական կրթությունից և նման պայմաններում ինչպե՞ս օգնել երեխային:

3. Դասարանից՝ դասարան, տարրական դպրոցից՝ միջին դպրոց,միջինից՝ ավագ դպրոցկամ դպրոցից՝ դպրոց փոխադրվելիս ի՞նչ դժվարություններ կարող են առաջանալ և փորձել այդ անցումները կառավարել:
4. Ապահովել, որ դպրոցի մյուս երեխաները ևս աջակցեն տվյալ երեխային,փորձեն հասկանալ երեխայի կարիքները, չծաղրեն նրան և այլն:
5. Դպրոցը պետք է կարողանա բարձր գնահատել ծառայություններից ոգտվելու և մասնագիտական ծառայություններ ապահովելու հնարավորությունը,պարզել, թե անհրաժեշտ ծառայություններից որո՞նք են առկա և ինչպե՞ս օգտվել այդ ծառայու-թյուններից: Դպրոցներում այս խնդիրներին և խոչընդոտներին հաղթահարելու համար անհրաժեշտ է պատասխանել հետևյալ 2 հարցերին՝
   - Որո՞նք են հաշմանդամություն ունեցող երեխաների ընտանիքները, որ այժմ դժվարին իրավիճակում են:
   - Որո՞նք են այդ ընտանիքների կոնկրետ կարիքները, երբ կրթական գործընթացում աջակցում ենք իրենց երեխաներին:

Քայլ 1.

Հենվելով այս հարցադրումների վրա՝ անհրաժեշտ է տեղեկություններ հավաքել և երբ ճանաչվեն կոնկրետ կարիքները պետք է դասակարգել այն խնդիրները, որոնց բախվում են ընտանիքները:

Համապատասխան տեղեկություններ հավաքե;ու համար կարելի է օգտվել մի քանի ուղղորդող հարցերից:

1. Հաշմանդամություն ունեցող քանի՞ երեխա է սովորում այս դպրոցում:
2. Ունե՞ք տեղեկություններ այդ երեխաների հաշմանդամության տեսակի մասին:
3. Ունե՞ք տեղեկություններ այդ երեխաների կացարանային պայմանների և աջակցության տեսակների մասին:
4. Ունե՞ք տեղեկություններ հաշմանդամություն ունեցող երեխաների մասին:

Եթե դպրոցը չունի տեղեկությունները, ապա կարելի է հանձնարարել որևէ աշխատակցի, ով կարող է աշխատել և՛ ուսուցիչների և՛ ծնողների հետ, պարզել դրանք:

Եթե դպրոցն ունի այս տեղեկությունները, ապա այս խմբի հետ անհրաժեշտ է աշխատել:

Ներառական դպրոցում աշխատող ուսուցիչը կաջակցի երեխաների խնամակալներին՝ փորձելով հասկանալ դրանք, և անհրաժեշտ օժանդակ միջոցների հետ փոխկապակցելով՝ կնպաստի երեխաների կրթությանն ինչպես դպրոցում, այնպես էլ տանը:

**Քայլ 2. Խնդիրների բացահայտում**

Այս քայլը խոչընդոտող հանգամանքների ուսումնասիրումն է, դրանք են `

- Կարողություններ – որոշ առաջադրանքներ կատարելու ֆիզիկական և հոգեբանական ունակություն:
- Հնարավորություններ – շրջապատում առկա ցանկացած գործոն, որը կարող է խրախուսել կամ խոչընդոտել վարքագծի որևէ դրսևորում:
- Դրդապատճառներ – այն ամենն, ինչ անհրաժեշտ է յուրաքանչյուր խնամակալի՝ կրթական գործընթացում իր երեխաներին աջակցելու համար:

Այս կարիքների դասակարգման նպատակը որոշակի խնդիրը այն լուծելու համար դպրոցի կողմից ամենահարմար միջոցը ընտրելն է:

Այլ կերպ ասած՝ այս տեղեկությունները օգնում են հասկանալու խնդիրն ու գտնել դրա ամբողջական, համակարգային լուծումները:

Այս քայլը ուսուցչից պահանջում է խոսել երեխաների խնամակալների հետ այն խնդիրների մասին, որոնց նրանք բախվում են կրթության գործընթացում իրենց երեխաներին աջակցելիս: Այս նպատակով կարելի է համագործակցել այլ ուսուցիչների կամ դպրոցի համակարգողների հետ:

Երեխային խնամող անձանց հետ երեխայի կարիքների վերաբերյալ տեղեկություններ հավաքելիս օգտագործվում են հետևյալ հուշող հարցերը.

- Ձեր կարծիքով երեխան դպրոց հաճախելուց օգուտ ստանում է, թե ոչ,
- Դպրոց հասնելու համար երեխան օգնության կարիք ունի, թե ոչ
- Դուք որևէ աջակցություն ստանում եք երեխային օգնելու համար,
- Ուսուցիչները որևէ աջակցություն ցուցաբերում են ձեր երեխային,
- Արդյոք դպրոցն ապահովում է որևէ ծառայություն կամ աջակցություն, որի կարիքը ունի ձեր երեխան, որպեսզի հաճախի դպրոց(օրինակ՝ լոգոպեդ, սոցիալական մանկավարժ, ժեստերի լեզվի մասնագետ և այլն):
- Արդյոք դպրոցն ունի օժանդակ սարքեր կամ տեխնիկա,
- Ի՞նչը կօգնի ապահովել ձեր երեխայի հաջողությունը դպրոցում,
- Ի՞նչ մտահոգություններ ունեք ձեր երեխայի կրթական գործընթացին ներգրավելու հարցում:

1. ***<u>Կարողությունները</u>***՝ դրանք- որոշակի վարքագիծ դրսևորելու մարդո ֆիզիկական կամ հոգեբանական ունակություններն են:

Իր երեխայի կարիքները հոգալու համար պետք է հարցերի միջոցով պարզել նրա հմտությունները,

1) Ճանաչողական հմտություններ – Արդյո՞ք գիտակցում եք, թե ինչ պետք է անեք: Գիտե՞ք ինչպես անել դա,
2) Միջանձնային – Արդյո՞ք գիտեք ինչպես խոսել մարդկանց հետ, պաշտպանել ձեր

շահերը կամ բանակցել ձեզ հուզող հարցերի շուրջ,

3) Իրազեկվածություն - Արդյո՞ք տեղյակ եք ձեզ հասանելի տարբերակներին,
4) Տարբերակների գնահատում և որոշումների կայացում – Կարո՞ղ եք արդյոք վերլուծել առկա զանազան տարբերակները և կայացնել ճիշտ որոշում,
5) Ուշադրության կենտրոնացում – Արդյո՞ք այն, ինչ հարկավոր է անել, կգրավի ձեր ուշադրությունը
6) Հիշողություն - Արդյո՞ք կհիշեք՝ ինչ պետք է անեք,
7) Ֆիզիկական կարողություն - Արդյո՞ք դուք ունեք ֆիզիկական կարողություն դա անելու համար,

***2. <u>Հնարավորությունները</u>***՝ դրանք - Շրջապատում առկա ցանկացած գործոններ են, որոնք այս կամ այն գործողությունների ժամանակ կարող են խրախուսել կամ խոչընդոտել:

Այս դեպքում խմամակալ անձի կարիքները պարզաբանելու համար տալ հետևյալ հարցերը.

- Ռեսուրսներ և ժամանակ- Արդյո՞ք ունեք բավարար ռեսուրսներ և ժամանակ ձեր անելիքն իրագործելու համար:

- Նպաստող հանգամանքներ շրջապատում- Արդյո՞ք շրջապատը խրախուսում կամ խանգարում է իրագործելու ձեր անելիքը:

- Օրինակելի մոդելներ- Շրջապատում օրինակելի ի՞նչ մոդելներ կխրախուսեն ձեզ դա անել:

- Սոցիալական և մշակութային նորմեր- Արդյո՞ք ձեր համայնքում նորմալ և ընդունելի է: Արդյո՞ք ուրիշները ձեր մասին վատը կմտածեն, եթե այդպես վարվեք:

Խնամակալը կարող է ունենալ խնդիրներ, որոնք կձևակերպենք որպես մարտահրավերներ, բերենք մարտահրավերների մի քանի օրինակներ.

- Համայնքում օգտակար բան չկա երեխայի համար,
- Խնամակալը անհրաժեշտ իրերի գնումների համար ռեսուրսներ կամ ժամանակ չունի,

--Խնամակալը չի ճանաչում որևէ այլ ընտանիքի, որին հաջողվել է օգնել հաշմանդամություն ունեցող իր երեխային:

***<u>3. Դրդապատճառները</u>***՝ դրանք- մտքեր կամ ինքնաբերական գործընթացներ են, որոնք խրախուսորմ կամ խոչընդոտում են վարքագծի որևէ դրսևորում: Ի՞նչ պետք է անի խնամող անձը իր երեխայի կրթական կարիքները հոգալու համար:

Խնամակալի սեփական կարիքների մասին հարցնելիս՝ նրան պետք է տալ հետևյալ հարցերը.

- նույնականացում- արդյո՞ք ձեր ասելիքը համապատասխանում է ձեր պատկերացումներին,

-հետևանքների ակնկալիքներ- ձեր վարքագիծը դրական, թե՞ բացասական հետևանքներ կունենա: Արդյո՞ք նման հետևանքն ակնկալելի կամ իրատեսական է: Ի՞նչ ազդեցություն այն

կունենա:

- հույզեր- դա անելիս ի՞նչ զգացողություններ եք ունենում: Ինչպիսին է ձեր վերաբերմունքը դրան,
- նպատակներ- ունե՞ք արդյոք հստակ նպատակ: Արդյո՞ք այս նպատակը ձեզ համար առաջնային է:
- սեփական ունակությունների վրա վստահություն- համոզվա՞ծ եք արդյոք, որ կարող եք դա անել,
- սովորություններ- արդյո՞ք նման վարքագիծը սովորական է,
- պատասխանատվություն- ու՞մ առջև եք պատասխանատու,
- ինքնաբերական արձագանք- արդյո՞ք դա անում եք ինքնքբերաբար՝ առանց գիտակցելու:

Արդյո՞ք դա ձեր գիտակցական ընկալումից անկախ՝ ինքնաբերական արձագանք է: :

Խնամակալների առջև ծառացած մարտահրավերների մասին տեղեկանալուց հետո պետք է սկսել աշխատանքներ, ուղղված այդ խնդիրների լուծմանը: Այդ լուծումների հնարավոր տարբերակները գտնելու համար պետք է օգտվել «Օժանդակ նյութերի տեղեկատու»-ից: Այստեղ ներկայացված օժանդակ նյութերը կարող են հանդիսանալ որպես մեկնարկային կետ և, եթե ուսուցիչը գտնում է, որ դրանք կարող են օգտակար լինել երեխայի ծնողին, ապա կարող է ինքը ավելացնել համապատասխան նոր օժանդակ նյութ:

Գործիք 4-ից օգտվելիս խնամակալ ծնողը կարող է ներկայացնել տվյալ խնդրի լուծման իր սեփական մոտեցումն ու ծրագիրը՝ լրացնելով աղյուսակը:

Ուսուցչի դերն այս գործընթացում անչափ կարևոր է, քանի որ ճիշտ օժանդակ միջոց գտնելն ու օգտագործման ճիշտ ձևը հասկանալըկգրանցի առաջընթաց, օրինակ՝ տվյալ կարիքը բավարարելու ամենակարևոր մասը առաջնային խնդիրը գտնելն է:

Շատ կարևոր գործիք է «Երեխայի անհատական ուսուցման պլանը»՝ ԱՈԻՊ-ը(գործիք 5-ը, տես՝www.unicef.org/armenia/հրապարակումներ «Ներառական դպրոցներին, ուսուցիչներին և հաշմանդամություն ունեցող երեխաների խնամակալներին աջակցության լրացուցիչ գործիքներ» ուղեցույց): Այն անհրաժեշտ է վերանայել եռամսյակը մեկ՝ որպեսզի իրականացված աշխատանքները և գրանցված արդյունքները ավելի ակնհայտ առանձնացվեն, իսկ այն մեթոդները, որոնց շնորհիվ գրանցվել է առաջընթացը, շարունակաբար կիրառվեն թե՛տանը, թե՛դպրոցում:

ԱՈԻՊ-ը պետք է ներառի երեխայի խնամակալներից ստացված տեղեկություններ: Այդ տեղեկությունների հավաքագրման գործում ուսուցչին կօգնի գործիք 6-ը՝«Երեխայի ուսումնառության վերաբերյալ հարցաթերթիկ»-ը (տես՝www.unicef.org /armenia/ հրապարակումներ «Ներառական դպրոցներին, ուսուցիչներին և հաշմանդամություն ունեցող երեխաների խնամակալներին աջակցության լրացուցիչ գործիքներ» ուղեցույց):

Հնարավոր է, որ խնամակալները չիմանան վարքագծի կառավարման մեթոդեր, որոնցով կարելի է կառավարել երեխաների վարքը տարբեր իրավիճակներում, կամ հնարնավոր է, որ

կարիք ունենան հատուկ սարքավորումների կամ օժանդակ սարքերի:

Այս հարցում կարելի է օգնել խնամակալներին www.unicef.org/armenia/հրապարակումներ «Օժանդակ նյութերի տեղեկատու»-ից ընտրելու կոնկրետ մարտահրավերներին համապատասխան լուծումներ:

*Դրա համար պետք է կատարել հետևյալ քայլերը.*

1) Որպես ելակետ կարելի է օգտվել օժանդակ նյութերի տեղեկատուից՝ անվճար օժանդակ նյութեր հմտությունների և գործիքների վերաբերյալ գտնելու նպատակով:

Այստեղ՝ 3-րդ էջի աղյուսակում թվարկված են բոլոր այն գործիքները, որոնք պետք է կապել խնամակալների խնդիրների, երեխայի կարիքների զարգացման ոլորտի տարիքային խմբի հետ:

2)ՈՒսուցիչը կարող է աջակցել նրանց հասկանալու, թե ինչպես օգտագործել տվյալ ռեսուրսը կամ գործիքը:

3)Եթե նշված ռեսուրսներից ոչ մեկը խնամակալին հարմար չէ, աշխատանքի մեջ պետք է ներգրավել դպրոցի այլ մասնագետի, ով կարող է այլ ռեսուրսներ առաջարկել:

«Կազմակերպությունների տեղեկատու» բաժնում կարելի է որոնել այլ տեղական կառույցներ կամ կազմակերպություններ, որոնք տվյալ երեխայի խնամակալին կկապեն այլ խնամակալների հետ՝ փորձելով գտնել նոր ռեսուրսներ:[2]

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Խնամակալները ուսուցչի գործընկերներն են՝ ներառական կրթությունն իրականացնելիս: Հանդիպում են դեպքեր, երբ ընտանիքի մյուս անդամները դեմ են, որ երեխան հաճախի ներառական դպրոց: Այս դեպքում ներառական դպրոցը պետք է համագործակցի ուսուցիչների և խնամակալների հետ և կատարի քննարկումներ հետևյալհարցերի շուրջ.

ՆՊԱՏԱԿՆԵՐ-Ի՞նչ փոփոխություններ կցանկանայիք տեսնել երեխայի ուսումնական միջավայրում,

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ-Ինչպե՞ս կարող են օգնել դպրոցը և ուսուցիչները՝ այդ նպատակի իրականացման համար: Այս դեպքում կարելի օգտվել գործիք 7-ից (www.unicef.org/armenia/հրապարակումներ «Ներառական կրթությունը խրախուսող գործիքակազմ խնամակալների համար»):

Հեշտ չէ խնամակալ լինելը և նրանց համար շատ կարևոր է ուսուցիչների աջակցությունը, քանի որ ուսուցիչները կարող են տալ մի շարք գործնական խորհուրդներ:

Ահա դրանցից մի քանիսը.

Դադա՛ր առեք- Երբ լարվածություն եք զգում, դադա՛ր առեք, դա կօգնի հանգստանալ և կենտրոնանալ:

Հիշե՛ք, որ նրանք միայնակ չեն- Միլիոնավոր մարդիկ ունեն նույն խնդիրները, փորձեք կապ պահել նույն վիճակում գտնվող անձանց հետ, պատմեք ձեր խնդիրների ու

հաջողությունների մասին:

Ընդմիջում արե՛ք – Փորձեք զբաղվել հաճելի և հանգստացնող գործերով:

Մարզվե՛ք – Ամեն օր զբաղվեք գործունեությամբ:

Խորհե՛ք – Օրվա վերջում մտածե՛ք որևէ դրական կամ հաճելի բանի մասին, որը տեղի ունեցավ այդ օրը:

Այս խորհուրդները կարելի է տպել ու փակցնել դպրոցի պատին կամ բաժանել խնամակալներին, քանի որ այս կարճ հիշեցումները թույլ կտան գտնել խնդիրների լուծման լավագույն տարբերակն ու շարունակել դժվարին աշխատանքը:

Ներքոհիշյալ մեկէջանոց խորհուրդները հասանելի են տարբեր լեզուներով, դրանք են՝ «Հանգստության պահպանում և լարվածության կառավարում»(https://bit.ly/36T3aSI), «Զայրույթի վերահսկում»(https://bit.ly35n60U6), «Աջակցություն հաշմանդամություն ունեցող երեղաներին (https://bit.ly/3uE5QLJ), «Սովորության ձևավորում»(https://bit.ly/3wUQLZf), «Ընտանեկան ներդաշնակություն տանը»(https://bit.ly/3uAql6G) և «Երեխաների դաստիարակությունը բազմանդամ ընտանիքներում և համայնքներում» (https://bit.ly/3NB2uC4):

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Ընտանիք և դպրոց, N3, 2015թ.
2. Հաշմանդամություն ունեցող երեխաների խնամակալների, ուսուցիչների և դպրոցի անձնակազմի համար ներառական կրթության աջակցության և ուղեցույցների փաթեթ, ՅՈՒՆԻՍԵՖ, Երևան, 2022թ.
3. Ներառման ուղեցույց, մատչելի կրթություն բոլորի համար, ՅՈՒՆԵՍԿՕ, 1994թ.
4. “ՀՀ օրենքը Հանրակրության մասին”, ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին – www.arlis.am,

Сулеймановна Р.А., О включений детей с ограниченными возможностями в общее образовательный проце